

Հավելված
ՀՀ կառավարության 2010թ.
փետրվարի 25-ի նիստի N7
արձանագրային որոշման

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ (2010-2012 ԹԹ.)

1. Հիմնական սկզբունքներ

Էլեկտրոնային հասարակության ձևավորումը ենթադրում է համալիր ծրագրի առկայություն, որը հաշվի կառնի 21-րդ դարի կարևորագույն զարգացումները: Էլեկտրոնային հասարակության ձևավորման սույն հայեցակարգային դրույթները և ժամանակացույցը հիմնված են աշխարհի զարգացած և զարգացող երկրների լավագույն փորձի վերլուծության և համադրման վրա, որը տեղ է գտել «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգերում:

Ըստ ժամանակացույցի՝ հետագա երեք տարիների ընթացքում կիրագործվի ազգային լայնաշերտ ցանցի նախագծում, մշակում և տեղադրում, ինչպես նաև միջազգային կապուղիների քանակի և թողունակության ավելացում, ինչն ամբողջ երկրում կապահովի կապ քաղաքացիների, ձեռնարկությունների և պետական աշխատողների միջև, որի արդյունքում էլեկտրոնային կառավարման և այլ կոմերցիոն/առևտրագովազդային մեծաթիվ առցանց ծառայություններ հասանելի կլինեն Հայաստանի քաղաքացիներին: Նախատեսվում է ՀՀ ամբողջ տարածքում՝ ներառյալ գյուղական վայրերում, անցկացնել 100Մբ/վ թողունակությամբ «Հաջորդ սերնդի լայնաշերտ ցանց»: Ցանցի հիմնական հանգույցներից քաղաքացիների տներ և բնակարաններ կապը կընդլանվի հիբրիդ ձևով (WiMax, օպտիկամանրաթելային և այլն)՝ միջին ժամկետում ապահովելով օպտիկամանրաթելային ցանցի հասանելիությունը դեպի տուն: Այս միջոցառումները նախատեսվում է իրականացնել մասնավոր և պետական համագործակցության ներդրումային սխեմայի միջոցով:

Ինտերնետային նոր հիմնացանցի ենթակառուցվածքի, էլ. ծառայությունների և քաղաքացիների նույնականացման (կամ ID) քարտերի համակարգի ստեղծումը նույնպես

կպահանջի նոր օրենքի և օրենսդրության քննարկում և ընդունում, որոնք կկարգավորեն բիզնես գործունեությունը և գործարքները կիբեռ-տարածքի մեջ: Այս նոր օրենքների ընդունմանը զուգահեռ անհրաժեշտ է որդեգրել կիբեռ-տարածքի վերաբերյալ հստակ մոտեցում՝ պետական տեղեկատվության և քաղաքացիներին առնչվող տվյալների շտեմարանների պաշտպանության նպատակով:

Էլեկտրոնային հասարակության կայացման գործընթացին քաղաքացիների մասնակցությունը ապահովելու համար ՀՀ կառավարությունը մտադրվում է գործել երեք ուղղություններով.

1. Հասանելիություն- սարքավորումների և ընթացիկ ծախսերի վերաբերյալ
2. Հնարավորություն և արդիականություն- քաղաքացիներին անհրաժեշտ ունակությունների և վստահության ապահովում
3. Մատչելիություն - գլխավոր ծառայությունների մատչելիության ապահովում, մասնավորապես,
սահմանված «Լայնաշերտ ցանցի համընդհանուր ծառայության պարտավորագրով»:

1.1 Հաջորդ սերնդի լայնաշերտ ցանց

Բազմաթիվ երկրներ դիտարկում են «Հաջորդ սերնդի ցանցը» (Next Generation Access Networks) որպես միջազգային մրցունակության բաղադրիչ: Այն երկրները, որոնք դեռևս միացած են 14.4 Կբ/վ թողունակությամբ ինտերնետին իսկապես բացասական արդյունքներ կարձանագրեն: Նոր ծառայությունները արագորեն կգարգանան այն երկրներում, որտեղ ավելի վաղ է ներդրվել մալուխային ցանցը: Քանի որ, հստակ հնարավոր չէ կանխատեսել նոր ցանցի ամբողջ ազդեցությունը, կարելի է ընդգծել նրա արտադրողականության բարձրացումը՝ առաջին սերնդի լայնաշերտ ցանցի համեմատ: Մյուս տնտեսապես զարգացած երկրներն ընդունում են ապագա սերնդի լայնաշերտ ցանցում ներդրումների կարևորությունը և դրան հասնելու համար մշակում են տարբեր ռազմավարություններ: Հայաստանի Հանրապետությունը նպատակ ունի մոտ ապագայում ներդնել «Հաջորդ սերնդի ցանց»: Բացի բարձր ճշտությամբ զվարճանքներից և խաղերից «Հաջորդ սերնդի ցանցը» կառաջարկի նաև այլ կիրառություններ: Այն կներառի հեռուստատեսություն, որը թույլ կտա ունենալ աշխատանքի ավելի ճկուն պայմաններ, էլ. առողջապահություն տնային պայմաններում, ինչպես նաև փոքր բիզնեսում ամպային համակարգչային գործողություններ ունենալու հնարավորություն (Cloud computing): Վերջինս իր հերթին զգալիորեն կկրճատի ծախսերը, հնարավորություն կընձեռնի ստանալ նորարարական արագ արտադրանք և մատուցել նոր ծառայություններ:

Ամպային համակարգչային գործողությունները տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայությունների մատուցման նոր մոդելներ են, որոնք ինտերնետի միջոցով

տրամադրում են դինամիկ, մասշտաբային և հաճախ վիրտուալ ռեսուրսներ: «Ամպ» տերմինը բնորոշում է բարդ ենթակառուցվածքի կերպար, որը քողարկում է բոլոր տեխնիկական մանրամասնությունները: Այդ դեպքում տեղեկատվությունը մշտապես պահպանվում է համաշխարհային ցանցի սերվերներում և ժամանակավորապես պահպանվում է հաճախորդի համակարգչում:

Լայնաշերտ ցանցի զարգացումը տարբեր երկրներում

Ֆինլանդիա

2008 թ. դեկտեմբերին Ֆինլանդիայի կառավարությունը հրապարակեց պարտավորագիր, որտեղ նշվեց, որ մինչև 2010թ. 1 Մբ/վ թողունակությամբ համընդհանուր ծառայությունները հասանելի կլինեն ամբողջ Ֆինլանդիայի բնակչությանը: Այդ ծառայությունները իրագործվեցին ֆիքսված և անլար կապերի միջոցով: Այսօր Ֆինլանդիայի կառավարության նպատակն է մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ը ներդնել 100 Մբ/վ թողունակությամբ ցանց, որը հասանելի կլինի ամբողջ երկրի բնակչության ու բիզնեսի 99%-ին:

Մեծ Բրիտանիա

Դեռևս մեկ տարի առաջ բրիտանական “Virgin Media” ընկերությունը գտնվում էր զարգացման փուլում: Այսօր Virgin Media-ն տրամադրում է 50 Մբ/վ թողունակությամբ ինտերնետային կապ 7 միլիոն ընտանիքների և սույն թվականի երկրորդ եռամսյակի վերջում նպատակ ունի այն տրամադրելու 11 միլիոն ընտանիքների:

Գերմանիա

2009թ. Գերմանիայի կառավարությունը կարևորել է մինչև 2010թ. հանրային սեկտորի մասնակցությամբ իրականացնել լայնաշերտ ցանցի ռազմավարությունը, որը նախատեսում է տրամադրել 1 Մբ/վ թողունակությամբ ծառայություններ, իսկ 2014թ.՝ 50 Մբ/վ՝ ապահովելով բնակչության 75%-ին:

ԱՄՆ

Տնտեսությունը խթանելու նպատակով ԱՄՆ-ի կառավարությունը հատկացրել է 7.2 միլիարդ ԱՄՆ դոլար լայնաշերտ ցանցի նախագծի համար, որի մեծ մասը կբաշխվի դրամաշնորհների, վարկերի միջոցով: Այդ գումարից 4.7 միլիարդ դոլար հատկացվել է Ազգային տեղեկումի և տեղեկատվության վարչությանը (National Telecoms and Information Administration) Լայնաշերտ ցանցի տեխնոլոգիական հնարավորությունների նախագծի (Broadband Technology Opportunities Program) հրահանգման համար, որն ուղղված է

1.2 Հաջորդ սերնդի լայնաշերտ ցանցի շահագործմանն ուղղված միջոցներ

Հաջորդ սերնդի լայնաշերտ ցանցի շահագործման նպատակով կարելի է ընդունել հետևյալ մոտեցումները.

1. Նախատեսել շինարարական ընկերությունների համար ուղեցույցներ, որոնք կընդգրկեն իրենց ծրագրերում ապագա լայնաշերտ ցանցի ներդրումը
2. Շահագործման արժեքի նվազեցման նպատակով վերերկրյա ցանցի տեղակայմանն ուղղված կանոնակարգման պարզեցում:

Ինտերնետը ժամանակակից հասարակությունում

Ըստ որոշ հետազոտությունների՝ Բրիտանիայի հանրության 70% -ի համար ինտերնետը հանդիսանում է կյանքի կարևորագույն մասը և այն գերադասվում է բջջային կապից և թվային հեռուստատեսությունից: Լայնաշերտ ցանցը կարևորվում է հասարակության որոշ խմբերի՝ հատկապես, դպրոցահասակների և ֆիզիկապես մեկուսացվածների համար: Նախատեսվում է, որ ապագայում յուրաքանչյուր ոք կունենա լայնաշերտ ցանցից օգտվելու անհրաժեշտություն, քանի որ օրըստօրե մեծանում է էլեկտրոնային եղանակով մատուցվող բազմազան ծառայությունների

1.3 Կազմակերպական գործառույթներ

Հայաստանի Հանրապետության վարչապետի նախագահությամբ Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարման խորհրդի պաշտոնական հիմնում (Հավելված 1) և ծրագրի հիմնական չորս ուղղություններով պատասխանատու մարմինների նշանակում: ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հանդես կգա որպես էլեկտրոնային կառավարման խորհրդի քարտուղարություն, իսկ էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (ԷԿԵՆԳ) ԲԲԸ-ն՝ խորհրդի տեխնիկական աշխատանքներ իրականացնող:

1.4 Տեխնոլոգիա

Կկատարվի բազմակողմանի ազգային լայնաշերտ ցանցի նախագծում, ձևավորում և շահագործում, ինչը կմիավորի քաղաքացիներին, բիզնեսը և կառավարությունը: Ծրագրերը կիրականացվեն միջազգային բանկերի փոխառությունների, կառավարական ֆինանսավորման և մասնավոր հատվածի ներդրումների հաշվին՝ հանրային-մասնավոր համագործակցության սկզբունքով: Համացանցի ամենալայն ներթափանցմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև «Համակարգիչ բոլորի համար» ծրագիրը կկազմեն տվյալ

խմբի գործողությունների կարևոր մասերից մեկը: Էլեկտրոնային կառավարության միջազգայնորեն ընդունված սկզբունքների կիրառումը թույլ կտա զարկ տալ գոյություն ունեցող տեղեկատվական ռեսուրսների ընդլայնմանը և համադրմանը: Էլեկտրոնային անվտանգության ապահովմանն ուղղված բազմակողմանի միջոցառումները թույլ կտան ունենալու ժամանակակից, պաշտպանված էլեկտրոնային համակարգեր:

1.5 Առցանց ծառայություններ

Հետագա երեք տարիների ընթացքում կգարգանան ինչպես կառավարական (էլեկտրոնային կառավարություն, հետագայում՝ e-gov / e-gov.am), այնպես էլ՝ առևտրային հատվածի ծառայություններ և ծրագրային կիրառումներ: Դրանք կիրականացվեն հանրային-մասնավոր համագործակցության հիման վրա՝ համախմբելով կառավարության ռեսուրսները (անձնակազմ և ներդրումային ֆինանսավորում) և Հայաստանի բիզնես-ռեսուրսները, ինչպես նաև միջազգային տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների (այսուհետև՝ S2S) ընկերությունների և գործընկերների միջոցները:

Մի շարք էլեկտրոնային ծառայություններ կիրականացվեն մասնավոր հատվածի 100 տոկոս ներդրումով, մինչդեռ որոշ ռազմավարական ծառայություններում կառավարությունը կտնօրինի վերահսկիչ բաժնեմասը:

1.6 Հանրային-մասնավոր համագործակցություն

Ժամանակացույցի իրագործումը կպահանջի գործուն հանրային-մասնավոր համագործակցության ձևերի մշակում և կիրառում: Այդ առումով կարևորվում է նոր էլեկտրոնային ծառայությունների, էլեկտրոնային կառավարման նոր լուծումների պարբերական եռամսյակային կիրառումները՝ հիմնականում 100% մասնավոր կամ հանրային-մասնավոր համատեղ ձեռնարկման ձևաչափով: Հանրային-մասնավոր մոդելը կներառի ՀՀ կառավարությունը, Հայաստանի մասնավոր բիզնես-հատվածը և ընտրություն անցած միջազգային կորպորացիաները:

1.7 Օրենսդրություն

Լայնաշերտ ցանցի, էլեկտրոնային ծառայությունների և քաղաքացիների նույնականացման քարտերի ներդրումը նաև կպահանջի կիրառ-տարածքում բիզնես գործունեությունը և գործարքները կառավարող նոր օրենքների ու օրենսդրության ընդունում: Այս նոր օրենքները պետք է խստագույնս հաշվի առնեն կիրառ-անվտանգության սկզբունքները՝ կառավարական տեղեկատվությունը և քաղաքացիների անձնական տվյալների շտեմարանները պաշտպանելու և հասանելիությունը ապահովելու նպատակով: Օրենքները և ստանդարտները, որոնք պետք է դրվեն նախագծերի հիմքում, պետք է համապատասխանեն միջազգային չափանիշներին: Էլեկտրոնային

հասարակության ձևավորման գործընթացի հաջողության ապահովման կարևոր նախապայման է անհրաժեշտ օրենսդրության և իրավական դաշտի ձևավորումը: Օրենսդրությունը պետք է հիմնարար պատկերացումներ տա տեղեկատվության, էլեկտրոնային փաստաթղթի, թվային ստորագրության, գաղտնիքի, հաշվառման ընթացակարգերի վերաբերյալ: Պետք է օրենսդրորեն սահմանվեն տեղեկատվության հաշվառման, մշակման, կիրառման, տրամադրման, ինչպես նաև էլեկտրոնային փոխհարաբերությունների կանոնները: Էլեկտրոնային փաստաթղթի և տեղեկատվության իրավական կարգավիճակը չպետք է զիջի թղթայինին:

1.8 Ֆինանսական միջոցներ

Հայեցակարգով նախատեսված միջոցառումների իրագործման ֆինանսավորման աղբյուր են հանդիսանալու տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցները, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների և մասնավոր հատվածի կողմից տրամադրված ֆինանսական միջոցները: Մասնավորապես, արդեն իսկ բանակցություններ է տարվում Համաշխարհային բանկի «Էլեկտրոնային հասարակություն և նորարարություններ մրցունակության համար» վարկային ծրագրի շուրջ, որի միջոցներից 12 միլիոն ԱՄՆ դոլար կուղղվի ժամանակացույցում նշված միջոցառումների իրագործմանը:

2. Ժամանակացույց

Ելնելով նախատեսվող աշխատանքների բնույթից և ընդգրկվող խնդիրների բազմազանությունից՝ դրանք խմբավորվել են տարեկան կտրվածքով, ըստ իրենց բնականոն զարգացման ընթացքի չորս խմբերով՝

- A. ինտերնետային լայնաշերտ հիմնացանց (Հավելված 2).
- B. համակարգիչների հագեցվածություն (Հավելված 3).
- C. էլեկտրոնային անվտանգության տարածում (Հավելված 4).
- D. էլեկտրոնային կառավարում, էլեկտրոնային ծառայությունների ներդրում (Հավելված 5).

Դա թույլ կտա կատարել ճշգրտումներ ըստ իրավիճակի փոփոխության, որը կարող է տեղի ունենալ ինչպես ֆինանսական ռեսուրսների, այնպես էլ նոր խնդիրների առաջացման պայմաններում, ինչը յուրահատուկ է այնպիսի դինամիկ փոփոխվող բնագավառներին, ինչպիսիք են տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաները (S2S) մասնավորապես և էլեկտրոնային հասարակության կայացումն ընդհանրապես: Ժամանակացույցը կազմված է 2010-2012 թթ. համար:

Ժամանակացույցի կազմումը տարեկան կտրվածքով թույլ կտա պետական բյուջեում պլանավորել համապատասխան ծախսերը, ինչպես նաև վերահսկել կատարվող գործողությունների ընթացքը:

2010-2012 թթ. ժամանակահատվածը, որը տվյալ նախագծի խնդիրների տիրույթն է, տրոհվել է չորս փուլի, որոնք արտացոլում են նախագծի զարգացման տարբեր մակարդակները, ընդհուպ մինչև էլեկտրոնային կառավարության իրականացում և էլեկտրոնային հասարակության կայացման կայուն հիմքերի ստեղծում: Դրանք են՝

1. Նախնական II 2010 թ.
2. Գործարկման II 2011 թ.
3. Զարգացման II 2012 թ.
4. Կայացման IV 2012 թ.

Նախնական փուլի ընթացքում իրագործվում են հիմնական կառույցների կազմակերպումը, հիմնարար փաստաթղթերի ստեղծումը և e-gov (էլ. կառավարման) փորձանմուշի մեկնարկը: Դրանց հիման վրա հետագայում կառուցվում են e-gov.am հիմնական վեբ ծառայությունները, որոնք, ստանալով ավարտուն բնույթ, կազմում են էլ. կառավարման հիմքը:

Քանի որ էլեկտրոնային հասարակությունը ենթադրում է հասարակության լայն խավերի ներգրավում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մեջ, ապա նախատեսվում է «Համակարգչային գրագիտություն դպրոցում» նախագիծը, որը պետք է ապահովի հանրակրթական դպրոցների շրջանավարտների պարտադիր համակարգչային հմտությունների տիրապետումը և նրանց բնականոն ընդգրկումը էլեկտրոնային հասարակության մեջ: Նմանատիպ եզակի նախագիծ է նաև «Համակարգիչ բոլորի համար» ծրագիրը, որը հնարավորություն կտա մատչելի դարձնել համակարգիչները և դրանց հետ առնչվող էլ. կառավարման գործառույթները բնակչության ամենալայն խավերի համար: Տեղեկատվական գիտելիքների տարածումը կրթական հաստատություններում կունենա հսկայական նշանակություն էլեկտրոնային հասարակության ձևավորման համար:

Առանձնահատուկ նշանակություն ունի ՀՀ վարչապետի գլխավորությամբ ձևավորվող էլ. կառավարման խորհուրդը, որը հնարավորություն կտա ընդունել պարտադիր որոշումներ բոլոր պետական մարմինների համար, ինչպես նաև արտակարգ իրավիճակի սպառնալիքի առաջացման և հետևանքների վերացման ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների համար:

Գործարկման փուլի ընթացքում տեղի կունենա էլեկտրոնային կառավարության փորձանմուշի իրագործումը, փորձարկումը և տեղակայումը: Կիրականացվեն մի շարք հիմնարար էլ. կառավարման ծառայություններ, ինչպես նաև դրանց կիրառ-

անվտանգությունն ապահովող միջոցառումներ: Վերանայվելու են կառավարության փաստաթղթաշրջանառությունը և նրա կիրառումները: Ապահովվելու է տվյալների ռեգիստրների համատեղելիությունը և կիրառվելու են դրանց ստեղծման և օգտագործման ընդհանուր մոտեցումները:

Մեկնարկելու է քաղաքացու անձը հաստատող (նույնականացման) քարտերի իրագործման նախագիծը, ինչպես նաև կենսաչափական տվյալներով անձնագրերի իրագործումը: Սկսվելու են աշխատանքներ լայնաշերտ հեռահաղորդակցման ցանցի և ազգային հիմնացանցի ստեղծման ուղղությամբ: Այդ աշխատանքների ընթացքում ժամանակակից թվային հեռուստատեսության և ռադիոյին զուգահեռ ՀՀ-ն կունենա ժամանակակից արագագործ հեռահաղորդակցության համակարգ, որը թույլ կտա գործարարներին և հասարակությանը կատարել առցանց գործառույթներ թափանցիկ և խիստ կանոնակարգված եղանակով, ինչպես դա արվում է այսօր աշխարհի շատ առաջավոր երկրներում:

Այս փուլի ընթացքում զուգահեռաբար կնախագծվեն ու կմեկնարկեն մի շարք կարևոր էլ. կառավարման ծառայություններ: Ոստիկանության, կրթության, առողջապահության և սոցիալական ոլորտի ծառայությունները, որոնք շոշափում են առավել լայն շրջանակների շահերը, կիրագործվեն առաջանցիկ: Մի շարք պետական նշանակության ծրագրեր կիրագործվեն՝ հաշվի առնելով միջազգային փորձը և ֆինանսական հնարավորությունները:

Զարգացման փուլի ընթացքում կիրագործվեն բոլոր հիմնական G2G (կառավարության տարբեր մարմինների միջև), G2B (կառավարության և մասնավոր ձեռնարկությունների միջև), G2C (կառավարության և քաղաքացիների միջև) վեբ ծառայությունները: Պետական մարմինների միասնական փաստաթղթաշրջանառության ու տվյալների ռեգիստրների պայմաններում հնարավոր կլինի ունենալ էլ. կառավարման նախագծի հիմնական բաղադրիչների ներդաշնակ աշխատանքը: Բիզնեսի և հասարակության ընդգրկումը էլեկտրոնային հասարակության մեջ կպայմանավորվի տեղեկատվական կրպակների լայն տեղակայմամբ, ինտերնետ մատչելիությամբ և դյուրաշարժ (բջջային) հեռախոսակապի հնարավորությունների օգտագործմամբ:

Էլեկտրոնային առևտրի խրախուսումը, էլ. բովանդակության լայն տարածումը (էլեկտրոնային գրադարաններ, կրթական էլեկտրոնային պաշարներ, դասավանդման էլեկտրոնային եղանակներ և այլն) հնարավորություն կտա զգալիորեն նվազեցնել թվային ճեղքվածքը քաղաքի և գյուղի, ունևոր և չբավոր խավի, հաշմանդամների և հասարակության այլ խավերի միջև:

Կայացման փուլի ընթացքում ենթադրվում է, որ լիովին կատարվել և գործում են G2G (կառավարության տարբեր մարմինների միջև), G2B (կառավարության և մասնավոր ձեռնարկությունների միջև), G2C (կառավարության և քաղաքացիների միջև) վեբ և այն բոլոր ծառայությունները, որոնք ապահովում են համակարգի բնականոն գործունեությունը՝ PKI (հանրային բանալու ենթակառուցվածք) սերտիֆիկացման կենտրոններ, կիբեռ-անվտանգության ծառայություն, ռեգիստրների վերահսկման և

ընդգրկման ծառայությունը և այլն: Մշակվում և իրագործվում են նախագծեր, որոնք ապահովում են e-gov.am համակարգի ինտեգրումը միջազգային կառույցներում: Ավարտին կմոտենան առաջնահերթ կարևորության արխիվների թվայնացման և կիրառման գործընթացները (քաղաքացիական կացության ակտերի արխիվի թվայնացում, էլեկտրոնային գրադարանների հասանելիության ապահովում, մշակութային արժեքների թվայնացում և այլն), որոնք անհրաժեշտ են պետական կառույցների և/կամ հասարակության լայն շերտերի համար:

«Համակարգիչ բոլորի համար» և «Համակարգչային և տեղեկատվական գիտելիքները կրթական հաստատություններում» ծրագրերը հիմնականում կատարած կլինեն իրենց առջև դրված հիմնական խնդիրները:

Վերոնշյալ փուլերի աշխատանքներն ամփոփված են որպես ծրագրերի հաջորդականություն: Փաստացի ծրագրային պլանը լինելու է ավելի բարդ, քանի որ վերին մակարդակի գործողությունները մասնատվելու են ավելի ցածր մակարդակի գործողությունների խմբերի, և յուրաքանչյուրին տրվելու են բացատրություններ և հիմնավորումներ, ինչը կկատարվի «Իրական Ժամանակում»՝ մասնագիտացված ծրագրային կառավարիչների կողմից:

Էլեկտրոնային հասարակության կայացումը չի կարող ավարտվել որևէ ծրագրի սահմաններում: 2012 թվականին, ըստ ձեռք բերված արդյունքների և աշխարհի առաջավոր երկրների նվաճումների, կքննարկվի և կկազմվի 2013-2015 թթ. զարգացման եռամյա աշխատանքային պլանը:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Խորհրդատու մարմին

Մասնավոր և պետական հաստիքների ներկայացուցիչներ, որոնք շահառու չեն և բնագավառում ունեն տեղական կամ միջազգային լայն ճանաչում

Էլեկտրոնային կառավարման խորհուրդ

Նախագահ՝ ՀՀ վարչապետ
Անդամներ՝ ՀՀ փոխվարչապետ, ՀՀ էկոնոմիկայի նախարար, ՀՀ տրասպորտի և կապի նախարար, ՀՀ կրթության և գիտության նախարար, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության պետ, ՀՀ ԿԱ ոստիկանության պետ
Քարտուղարություն՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Շահառուների խումբ

Մասնավոր և պետական հաստիքների ներկայացուցիչներ

Ինտերնետային հիմնացանցի տարածում

- Ծածկույթ
- Ինտերնետ/ինտրանետ

Համակարգչային հագեցվածություն

- Համակարգիչների օգտագործում
- Բնակչության ուսուցում
- Բովանդակության ստեղծում և տեղայնացում

Էլ. ծառայությունների տարածում

- Էլ. կառավարության ծառայություններ
- Այլ ծառայություններ
- Նույնականացման (ID) քարտ/էլ. ստորագրություն
- Բովանդակության ստեղծում և տեղայնացում
- Տվյալների կենտրոններ

Էլ. անվտանգություն

- Կիբեռ-անվտանգություն
- Կիբեռ-գրոհերի դեմ պաշտպանություն
- Տեղեկատվական անվտանգություն

Հավելված 2

A. Ինտերնետային լայնաշերտ հիմնացանց

(2010-2012թթ.)

№	Միջոցառում	Ժամկետ	Պատասխանատու մարմին	Արդյունք
1	Հաղորդակցության ենթակառուցվածքի ներկա իրավիճակի մանրամասն վերլուծություն (ներառյալ «վերջին մղունի» խնդիրը)	2010, I	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տրանսպորտի ու կապի նախարարություն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	Նյութ՝ Ենթակառուցվածքի վերլուծություն
2	Ազգային հիմնացանցի և կառավարական ներքին ցանցի մոդելների ձևավորում մասնավոր և պետական հատվածների միջև գործընկերության հիման վրա, ծրագրի իրագործման պլանի մշակում		ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Նյութ՝ Ցանցերի մոդելներ և Իրագործման պլան
3	Շինարարական նորմերի մշակում շինություններում և ստորգետնյա խողովակատարերում՝ օպտիկամալուխային հաղորդակցության գծերի տեղադրման համար		ՀՀ քաղաքացիական շինարարության նախարարություն	Նյութ՝ Շինարարական նորմեր
4	Ազգային ինտերնետային հիմնացանցի և ներքին կառավարական ցանցի ներդրման մրցութային փաստաթղթերի մշակում	2010, II	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Մրցութային փաստաթղթերի թողարկում
5	Այլ երկրներում կիրառվող Տեխնիկական չափանիշների կատալոգների ուսումնասիրում և չափանիշների հայերեն լեզվով տեղայնացված տարբերակի պատրաստում		ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Նյութ՝ Տեխնիկական չափանիշների տեղայնացված կատալոգ

№	Միջոցառում	Ժամկետ	Պատասխանատու մարմին	Արդյունք
6	Միջազգային ինտերնետային հիմնացանցերի հետ ինտեգրման հնարավորության վերլուծություն և պլանի մշակում		ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տրանսպորտի ու կապի նախարարություն ՀՀ հանրային ծառայությունների կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	Նյութ՝ Միջազգային ինտեգրման վերլուծություն և պլան
7	Ֆինանսավորման հնարավորությունների վերաբերյալ դոնոր կազմակերպությունների և ֆինանսական հաստատությունների հետ բանակցությունների ամփոփում		ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Ստորագրված Ֆինանսավորման/ ներդրումային համաձայնագիր
8	Ինտերնետային հիմնացանցի համար առաջարկների ուսումնասիրում և ամփոփում: Իրականացման I փուլի համար պայմանագրերի արդյունավետ բանակցում և համաձայնեցում՝ ուղղված Անվտանգ կառավարական ներքին ցանցի իրագործմանը	2010, IV	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տրանսպորտի ու կապի նախարարություն	Նախնական տարբերակով Անվտանգ կառավարական ներքին ցանցի իրագործում
9	Անվտանգ կառավարման ներքին ցանցի՝ մինչև Տեղական ինքնակառավարման մարմիններ ընդլայնում	2011, II	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Ընդլայնված տարբերակով Անվտանգ կառավարական ներքին ցանցի իրագործում
10	Միջազգային ինտերնետային հիմնացանցերի հետ ինտեգրման պլանի իրականացման մեկնարկ		ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տրանսպորտի ու կապի նախարարություն ՀՀ հանրային ծառայությունների կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	Միջազգային ինտեգրման աշխատանքների մեկնարկ

№	Միջոցառում	Ժամկետ	Պատասխանատու մարմին	Արդյունք
11	Ազգային հիմնացանցի և Անվտանգ կառավարական ներքին ցանցի իրականացման ավարտ. բոլոր քաղաքները և ավանները փուլ առ փուլ միացած են բոլոր գյուղերին անլար/լարային հաղորդակցության միջոցով	2011, IV	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ տրանսպորտի ու կապի նախարարություն ՀՀ հանրային ծառայությունների կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	Ազգային հիմնացանցի և Անվտանգ կառավարական ներքին ցանցի ամբողջական իրագործում
12	ՀՀ ³նի³İ³ñ· Çñ³İÇ×³İÝ»ñÇ Ý³Ë³ñ³ñáóÃÛ³Ý Ð³Û³er³ÝÇ ÷ñİ³ñ³ñ İ³é³ÙáóÃÛ³Ý úá»ñ³İÇİ İ³é³İ³ñÛ³Ý İ³ñááóÃÛ³Ý ×·Ý³Á³Û³ÛÇÝ İ³é³İ³ñÛ³Ý İ»ÝİñáÝáóÛ ¿Ë»İİñáÝ³ÛÇÝ İ³é³İ³ñÛ³Ý Ñ³Û³İ³ñ·Ç Ý»ñ¹ñáóÛ³ " ÷áñÓ³ñİáóÛ³	2011, IV	<p>ÐÐ ³ñ³İ³ñ· Çñ³İÇ×³İÝ»ñÇ Ý³Ë³ñ³ñáóÃÛ³áóÝ</p> <p>ÐÐ ¿İáÝáÛÇİ³ÛÇ Ý³Ë³ñ³ñáóÃÛ³áóÝ</p> <p>ÐÐ ýÇÝ³ÝéÝ»ñÇ Ý³Ë³ñ³ñáóÃÛ³áóÝ</p> <p>ÐÐ İñ³ÝéááñİÇ " İ³áÇ Ý³Ë³ñ³ñáóÃÛ³áóÝ</p> <p>ÐÐ İ³ñ³İ³ñÛ³ÛÇÝ İ³é³İ³ñÛ³Ý Ý³Ë³ñ³ñáóÃÛ³áóÝ</p>	³⁴Ë»İİñáÝ³ÛÇÝ İ³é³İ³ñÛ³Ý Ñ³Û³İ³ñ·

№	Միջոցառում	Ժամկետ	Պատասխանատու մարմին	Արդյունք
13	Հայաստանի կառավարական ցանցի ինտեգրում Միջազգային կառավարական ցանցերին՝ ՄԱԿ-ի, ՄԱԿ-ի Զարգացման գործակալության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Համաշխարհային բանկի խորհուրդների հիման վրա և միջնորդությամբ, այդ թվում նաև՝ Եվրոպա, ԱՄՆ, Մերձավոր Արևելքի և Հեռավոր Արևելքի երկրներ՝ ըստ փոխգործելիության չափանիշների	2012, II	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Հայաստանի կառավարական ցանցի՝ միջազգային ցանցերի հետ ինտեգրման իրագործում
14	Հայաստանի թվային հեռուստատեսության հիմնացանցի բետա տեստավորում	2012, III	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տրանսպորտի ու կապի նախարարություն Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով (համաձայնությամբ)	Թվային հեռուստատեսության հիմնացանցի բետա տեստավորում
15	Թվային հեռուստատեսության մեկնարկ հոսքային առցանց հիմնացանցի կամ դասական արբանյակային համակարգերի միջոցով՝ օգտագործելով քաղաքից քաղաք տարածված հիմնացանցը, ծառայությունների մատուցման համար	2012, IV	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տրանսպորտի ու կապի նախարարություն	Թվային հեռուստատեսության մեկնարկ

Բ. Համակարգիչների հազեցվածություն
(2010-2012թթ.)

Պատասխանատու մարմին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

№	Միջոցառում	Ժամկետ	Արդյունք
1	500-1000 համակարգիչներ դրվում են վաճառքի	2010, I Փորձնական փուլ	500-1000 համակարգչի վաճառք
2	Մանրածախ վաճառքի կետերի ցանցի փորձարկում		
3	Բանկի հետ վարկային պայմանագրի փորձարկում, մարման և ռիսկերի հետ կապված գործընթացի փորձարկում		
4	Սպասարկման / հետվաճառքային սպասարկման կազմակերպում		
5	Հասարակայնության հետ կապերի / շուկայի իրազեկման գործողությունների մեկնարկ		
6	Պետության կողմից բանկերի երաշխավորում բանկային վարկերի և ԱԱՀ ազատման ապահովման համար		
7	Իրացում՝ 4000 միավոր մեկ կիսամյակում	2010, Նախնական փուլ	8000 համակարգչի վաճառք Ֆինանսավորման/ ներդրումային պայմանագրերի կնքում
8	Վաճառքի կետերի ընդլայնում դեպի մարզեր		
9	Բանկերի և մարզերի ներգրավվածության ընդլայնում		
10	Կառավարությունը ներգրավում է Վերականգնվող ֆոնդեր		
11	Կառավարության կողմից հասարակայնության հետ կապերի և հանրային իրազեկման համատարած միջոցառումներ		
12	Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման /առցանց վերջին սպառողի սպասարկման կազմակերպում		

№	Միջոցառում	Ժամկետ	Արդյունք
13	Համակարգիչներում տեղադրվող բովանդակության և ծրագրային ապահովման մշակում / Ինտերնետային կապի ապահովման հնարավորություն		
14	Ֆինանսավորման հնարավորությունների վերաբերյալ դոնոր կազմակերպությունների և ֆինանսական հաստատությունների հետ բանակցությունների ամփոփում		
15	Վաճառքի միջին ծավալ՝ 4000 միավոր մեկ եռամսյակում	2011, Հասունացման և փուլ	16000 համակարգչի վաճառք Ինտերնետային հասանելիության ապահովում
16	Հասարակայնության հետ կապերի ակտիվ կազմակերպում /Ուսումնական դասընթացներ/, Հեռախոսային սպասարկման կենտրոնների հիմնում և գործունեության ապահովում		
17	Նոր բովանդակության տեղադրում համակարգիչներում		
18	Բոլոր մարզերի ներգրավվածության ապահովում		
19	Ինտերնետային հասանելիության ապահովում		
20	Վերականգնվող ֆոնդերի օգտագործում		
21	Իրացում՝ 10000 միավոր մեկ եռամսյակում	2012	40000 համակարգչի վաճառք
22	Բոլոր գործընթացները հսկողության տակ են	Կայացման փուլ	
23	Վերականգնվող ֆոնդերի օգտագործում		

C. Էլ. Անվտանգություն

(2010-2012թթ.)

*Պատասխանատու մարմին՝ ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ ԿԱ
ուստիկանություն*

№	Միջոցառում	Ժամկետ	Արդյունք
1	Հայտարարել կիբեռ-անվտանգության պետական հանձնաժողովի գործունեության մասին	2010, IV	Կիբեռ-անվտանգության պետական հանձնաժողովի հիմնում
2	Սահմանել կիբեռ-անվտանգության ընդհանուր շրջանակը	2011,IV	Նյութ՝ կիբեռ-անվտանգության ընդհանուր շրջանակ
3	Հայաստանի կառավարությունում «տեղեկատվական անվտանգության իրավիճակի» նախնական աուդիտ և ռիսկերի վերլուծություն		Նյութ՝ տեղեկատվական անվտանգության իրավիճակի նախնական աուդիտ և ռիսկերի վերլուծություն
4	Անվտանգության բաց ճարտարապետության, տիպարային չափանիշների, կիբեռ-անվտանգության օրենքի, օրենսդրության և տնտեսական հետևանքների մշակում		Կիբեռ-անվտանգության հետ կապված բազմաբնույթ նորմատիվ և իրավական նյութեր
	Կիբեռ-անվտանգության ծրագրի մեկնարկ	2012, I	Ծրագրի իրականացման մեկնարկ
5	Կիբեռ-անվտանգության հիմնական ներկայացուցիչների նշանակում /կիբեռ-անվտանգության թիմերի ղեկավարներ/ յուրաքանչյուր պետական կառավարման մարմնից, տեղական ինքնակառավարման մարմիններից, ՏՀՏ հիմնական մատակարարող կազմակերպություններից և միջազգային հաստատություններից, դրանց կիբեռ-անվտանգության կարողությունների գարգացում /անվտանգության թեմայով խորացված դասընթացներ/		Կիբեռ-անվտանգության հիմնական ներկայացուցիչների նշանակում և վերապատրաստում

№	Միջոցառում	Ժամկետ	Արդյունք
6	Անփոփել Միջազգային հեռահաղորդակցության կազմակերպության X805 առաջարկը (համապարփակ կապ տրամադրող համակարգերի անվտանգության ճարտարապետություն), առաջարկվող ISO չափանիշները և կենսաչափական նույնականացման (ID) ու ռադիոհաճախականության իդենտիֆիկացման սարքերի լուծումները		Ստանդարտների, չափանիշների և սարքերի սահմանում
7	Ապահովել անվտանգությունը բոլոր կիրառական ծրագրերում, այդ թվում՝ հարկային, մաքսային, առողջապահության, էներգետիկայի, տրանսպորտի, ֆինանսերի, ոստիկանության և պաշտպանության ոլորտներում		Ծրագրերում կիրառման անվտանգության կիրառում և համապատասխան օրենսդրության մշակում
8	Շարունակել մշակել նոր օրենսդրություն և տեղական ու միջազգային կիրառման հանցագործությունների դեմ օրենքների կիրառման միջոցներ		
9	Բարձրացնել իրազեկությունը կիրառման անվտանգության վերաբերյալ պետական մարմիններում և առաջատար S2S ձեռնարկություններում ու կազմակերպություններում		
10	Ավարտել անվտանգության իրավիճակի խորը վերլուծությունը և առողիտը		
11	Մկսել կիրառման անվտանգության վերաբերյալ տարբեր մակարդակների դասընթացներ համապատասխան պետական աշխատողների համար		Վերապատրաստման դասընթացներ պետական աշխատողների համար
12	Ստեղծել և հազեցնել Պետական գործառնական պատասխանատու կենտրոն, սահմանել գործունեության շրջանակը	2012, II	Պետական գործառնական պատասխանատու կենտրոնի հիմնում

№	Միջոցառում	Ժամկետ	Արդյունք
13	Մշակել գործունեության շարունակականության և վթարային իրավիճակների վերականգնման քաղաքականություն և ընթացակարգեր՝ ապահովելով պաշտպանություն կիբեռ- գրոհների և բնական աղետների դեմ /երկրաշարժեր, հրդեհներ, հեղեղներ և այլն/		Նյութ՝ Վթարային իրավիճակների վերականգնման քաղաքականություն և ընթացակարգեր
14	Ապահովել ամբողջ տեղեկատվության և անձնական տվյալների անվտանգությունը մալուխային, շարժական, անլար և արբանյակային ցանցերով պետական մարմինների, ձեռնարկությունների և քաղաքացիների համար		Տեղեկատվության և անձնական տվյալների անվտանգության ապահովում
15	Ապահովել և նախաձեռնել տեղեկատվության տեխնիկական անվտանգության ենթակառուցվածքի անհրաժեշտ կատարելագործումը Կառավարությունում, Ազգային ժողովում, Նախագահի գրասենյակում, ինչպես նաև պետական հաղորդակցության և պաշտպանության ցանցերի կազմակերպություններում և օղակներում /սա պահանջում է անվտանգության կազմակերպչական փոխգործելիության չափանիշների հետ համաձայնեցում/		Տեղեկատվության և անձնական տվյալների անվտանգության ապահովում
16	Շարունակել մշակել և ապահովել կիբեռ-անվտանգության, կիբեռ- հանցագործությունների, նույնականացնող քարտերի գողությունների և ֆինանսական խարդախությունների դեմ նոր օրենսդրության ընդունումը		Կիբեռ- անվտանգության օրենսդրության մշակում և ընդունում «Կիբեռ- հանցագործությունների մասին» կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցում
17	Ավարտել տեղեկատվական անվտանգության կատարելագործումը կիբեռ-անվտանգության յուրաքանչյուր ընտրված թիմի հետ	2012, III	Կիբեռ-անվտանգության ապահովման աշխատանքների և վերապատրաստման դասընթացների շարունակական գործընթացի ապահովում
18	Շարունակել ապահովել տեղեկատվության լիարժեք անվտանգության ընթացակարգի համաձայնեցումը և իրագործումը ՏՀՏ ծառայություններ մատուցող հիմնական կազմակերպությունների կողմից, ապահովել դրանց իրականացումը ըստ համաձայնեցված միջազգային չափանիշների		Տեղեկատվության և անձնական տվյալների անվտանգության ապահովում

№	Միջոցառում	Ժամկետ	Արդյունք
19	Շարունակել տարբեր մակարդակների ուսումնական դասընթացները		
20	Կազմակերպել ուսումնական այցելություններ առաջատար երկրներ		
21	Մշակել նոր օրենսդրություն ապահովելով հայկական օրենքների կիրառումը միջազգային մակարդակով		Էլեկտրոնային ֆինանսական ծառայությունների համար օրենսդրության և կողերի մշակված փաթեթ
22	Պետական գործառնական պատասխանատու կենտրոնի գործունեության հանրային մեկնարկ		Պետական գործառնական պատասխանատու կենտրոնի գործունեության հանրային մեկնարկ
23	Համատեղել կիրբեռ- անվտանգության աշխատանքները էլ.կառավարության նոր ծրագրերի մեկնարկի հետ		
24	Ուսումնական դասընթացների ինստիտուցիոնալ ձևակերպում		Ուսումնական դասընթացների ինստիտուցիոնալ ձևակերպում
25	Ընթացիկ կառավարման ապահովման համար ծրագրի անցում դեպի կիրբեռ- անվտանգության հայկական խորհուրդ /որը մեծապես կապված կլինի Ազգային անվտանգության ծառայության հետ/		Կիրբեռ- անվտանգության հայկական խորհրդի հիմնում
26	Կիրբեռ- անվտանգության, կիրբեռ- գրոհների և առցանց խարդախությունների դեմ նոր օրենսդրության հաստատում և վավերացում Ազգային ժողովի կողմից՝ համապատասխան լիազոր մարմինների կողմից կիրառման համար		Կիրբեռ- անվտանգության, կիրբեռ- գրոհների և առցանց խարդախությունների դեմ նոր օրենսդրության ամբողջական փաթեթի հաստատում և կիրառում

Հավելված 5

D. Էլեկտրոնային կառավարում, էլեկտրոնային ծառայությունների ներդրում

Նախապատրաստական փուլի միջոցառումներ

(I-II 2010թ.)

№	Միջոցառում	Ժամկետ 2010թ. (եռամս.)	Պատասխանատու մարմին	Արդյունք
1	Էլ. կառավարման փոխգործելիության (Interoperability) սկզբունքների մշակում	II	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	Եվրոպական երկրների (կամ Էստոնիայի) փոխգործելիության (Interoperability) շրջանակային մոտեցման տեղայնացում
2	Էլ. կառավարման համակարգում օգտագործվող ծրագրային միջոցների ու ստանդարտների ճշգրտում	II	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	Ըստ միջազգային փորձի էլ. կառավարման համար անհրաժեշտ ստանդարտների ցանկի կազմում և դրանց տեղայնացման սկիզբ
3	Էլ. կառավարման համակարգի իրավական փաստաթղթերի վերլուծություն և առաջարկների ներկայացում	II	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	Միջազգային փորձի վերլուծություն և ՀՀ-ում դրա կիրառության ապահովման առաջարկների պատրաստում
4	Պետական մարմիններում առկա տվյալների հենքերի, ծրագրային և տեխնիկական միջոցների գույքագրում	II	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն	Էլ. կառավարման նախագծի կազմում ընդգրկվող կիրառական ծրագրային փաթեթների և տեխնիկական միջոցների հստակեցում՝ նախագծի ծախսատարությունը նվազեցնելու համար

№	Միջոցառում	Ժամկետ 2010թ. (եռամս.)	Պատասխանատու մարմին	Արդյունք
5	ՀՀ տվյալների հենքերի ռեգիստրի կազմում	II	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ տվյալների հենքերի գրանցման և հսկման գործընթացների իրագործում
6	Էլ. կառավարման նախագծի հանրային մեկնարկ փորձանմուշի ցուցադրմամբ` <ul style="list-style-type: none"> – պետական մարմինների ղեկավար կազմի – գործարար միջավայրի և քաղաքացիների համար 	I	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Հասարակական և պետական մարմինների իրազեկում և նախապատրաստում Էլ. կառավարման նախագծի ներդրման հետևանքներին
7	Կառավարության էլ. փաստաթղթերի լուծումների վերանայում	II	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Էլ. կառավարման պահանջներին համապատասխանեցում
8	«Համակարգչային գրագիտություն դպրոցում» նախագծի մշակում և փորձնական ներդրում 10 դպրոցներում	I	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Համընդհանուր համակարգչային գրագիտության հիմքերի հաստատում` տեղեկատվական հասարակությանն անցումը ապահովելու համար: Ավարտվում է կառավարության որոշումով

Գործարկման փուլի միջոցառումներ

(II 2010թ.-II 2011թ.)

№	Միջոցառում	Ժամկետ 2010 / 2011թ. (եռամս.)	Պատասխանատու մարմին	Արդյունք
---	------------	--	------------------------	----------

1	e-gov.am-1 վեբ ծառայությունների ցանկի հստակեցում	II 2010	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Էլ. կառավարման նախագծի առաջին հատվածի հիմնարար սկզբունքների մշակում, փորձարկում և գործարկում որոշ պետական մարմիններում վեբ ծառայությունների ընտրված շրջանակում որպես հիմք՝ հետագայում բոլոր պետական մարմինների և համապատասխան վեբ ծառայությունների ընդգրկման համար
2	e-gov.am-1 համակարգի տեխնիկական և ծրագրային միջոցների պատվիրում և ստացում	II 2010	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	
3	e-gov.am-1 նախագծի մեջ ընդգրկված պետական մարմինների <ul style="list-style-type: none"> – բիզնես պրոցեսների նկարագրում – կառավարության պորտալի մշակում – պետական մարմինների պորտալների իրագործում – փոխհամատեղելիության հարցերի ապահովում – ծրագրային փաթեթի մշակում 	III 2010	e-gov-1 նախագծում ներգրավված նախարարություններ և գերատեսչություններ	
4	e-gov.am-1 նախագծում ընդգրկված պետական մարմինների աշխատակիցների ուսուցում	III 2010	e-gov-1 նախագծում ներգրավված նախարարություններ և գերատեսչություններ	
5	e-gov.am-1 ծրագրային-տեխնիկական փաթեթի ստենդային փորձարկումներ	IV 2010	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	
6	e-gov.am-1 համակարգի տեղակայում ՀՀ կառավարության աշխատակազմում և ընդգրկված պետական մարմիններում	IV 2010	e-gov-1 նախագծում ներգրավված նախարարություններ և գերատեսչություններ	
7	Փաստաթղթերի կառավարման և շրջանառության ընտրված համակարգի ներդրում պետական մարմիններում	III 2010 – IV 2010	e-gov-1 նախագծում ներգրավված նախարարություններ և գերատեսչություններ	

8	«Համակարգչային գրագիտություն դպրոցում» նախագծի ներդրում ՀՀ 300 դպրոցներում	II 2010 – IV 2010	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	300 դպրոցներում գործում է համակարգը և կատարվում է ուսուցանում: Ընթացքը կարգավորվում է կառավարության որոշմամբ
9	Հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում ժամանակակից էլեկտրոնային ուսուցման ծրագրերի մշակում	III 2010 – II 2011	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Իրագործվում է ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության հայեցակարգային դրույթների՝ Եվրոպական չափանիշներին համապատասխանեցմամբ
10	Նույնականացման քարտերի և էլեկտրոնային անձնագրերի մշակում	III 2010 – IV 2010	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ԿԱ ոստիկանություն	
11	Նույնականացման քարտերի ներդրում	I 2011 – I V 2012	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ԿԱ ոստիկանություն	Քարտերի տրամադրում ՀՀ բնակչությանը ըստ ընտրված չափանիշների
12	Կենսաչափական տվյալներով էլեկտրոնային անձնագրերի ներդրում	I 2011 – I V 2012	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ԿԱ ոստիկանություն	Անձնագրերը տրամադրվում են ՀՀ քաղաքացիներին՝ ըստ ընտրված չափանիշների
13	Էլ. կառավարման կենսաթոշակային համակարգի մեկնարկ	V 2010 – II 2011	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Կենսաթոշակներին վերաբերվող բոլոր վեբ ծառայությունների գործարկում
14	Էլ. կառավարման ձեռնարկությունների գրանցում	IV 2010 – II 2011	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Ձեռնարկությունների գրանցման գործառույթների իրագործում վեբ ծառայությունների միջոցով
15	Էլ. կառավարման կադրերի կառավարման ծառայությունների իրագործում	IV 2010 – II 2011	ՀՀ քաղաքական ծառայության խորհուրդ (համաձայնությամբ)	Մարդկային ռեսուրսների կառավարման հետ կապված վեբ

				ծառայությունների իրագործում
16	Էլ. քաղաքացիական կացության ծառայությունների իրագործում	III 2010 – II 2011	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործառնությունների հետ կապված վեբ ծառայությունների իրագործում
17	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) արխիվի էլեկտրոնային իրագործում (երկու տարվա համար)	III 2010 – II 2011	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	Էլ. կառավարման նախագծի վեբ ծառայությունների ապահովում
18	Էլ. գնումների մեկնարկ	IV 2010 – II 2011	ՀՀ ֆինանսների նախարարություն	Վեբ ծառայությունների գնումների թափանցիկության և արդյունավետության բարձրացման համար

**Զարգացման փուլի միջոցառումներ
(III 2011թ. – II 2012թ.)**

№	Միջոցառում	Ժամկետ 2011թ. (եռամս.)	Պատասխանատու մարմին	Արդյունք
1	Պետական ու տարածքային կառավարման մարմիններին անհրաժեշտ համակարգչային տեխնիկայի և ծրագրային միջոցների տրամադրում՝ հասնելով դրանցով քաղծառայողների 100 % ապահովվածությանը	III – IV 2011	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	Քաղծառայողների աշխատանքի արդյունավետության բարձրացում՝ վեբ ծառայությունների օգտագործմամբ
2	Պետական բոլոր մարմինների տվյալների փոխանակման միասնական համակարգի իրագործում	III – IV 2011	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Փոխանակվող տվյալների ստանդարտացված գործառնությունների

				իրագործում վեբ ծառայությունների կիրառմամբ
3	<p>e-gov.am-2 նախագծի բաղադրիչների իրագործումը ըստ ոլորտների՝ հիմնվելով e-gov.am-1 նախագծի առանցքային արդյունքների վրա:</p> <p>Յուրաքանչյուր բաղադրիչի համար կատարվում է՝</p> <ul style="list-style-type: none"> – առաջադրանք, – բիզնես գործընթացների նկարագրություն, – ծրագրային ապահովման մշակում, – առանձնացված և համալիր փորձարկումներ, – տեղակայում, – աշխատակազմի ուսուցում 	III 2011 – IV 2012	e-gov-2 նախագծում ներգրավված նախարարություններ և գերատեսչություններ	<p>Պետական կառավարման մարմինների հիմնական վեբ ծառայությունների գործարկում:</p> <p>Կապակցված վեբ ծառայությունների սրամադրում քաղաքացիներին, բիզնեսին և կառավարման օղակներին:</p> <p>Ծառայությունները կներառեն.</p> <ul style="list-style-type: none"> • Էլ. բյուջեի իրագործում • Էլ. հարկային համակարգի ծառայություններ • Էլ. առողջապահության համակարգի ծառայություններ • սոցիալական ոլորտի էլ. ծառայություններ • ձեռնարկությունների էլ. գրանցում • նույնականացման քարտերի ներդրում • դիմում/բողոքների և առաջարկների առցանց գրանցում • աշխատանքի որոնում և աշխատաշուկայի ծառայություններ • շինարարության թույլտվության

				<p>դիմումներ</p> <ul style="list-style-type: none"> • տվյալների փոխանցում Ազգային վիճագրական ծառայություն բոլոր պետական մարմիններից • մաքսային հայտարարագրեր • Էլ. կենսաթոշակների էլ. ծառայությունների իրագործում • Էլ. գնումների էլ. ծառայությունների իրագործում
4	«Համակարգչային գրագիտություն դպրոցում» ծրագրի իրականացում հանրապետության բոլոր դպրոցների համար՝ ավարտական դասարաններին վկայականների տրամադրմամբ	III 2011 – II 2012	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Դպրոցի աշակերտների՝ Եվրոպական չափանիշներին համապատասխան համակարգչային հմտությունների տիրապետում
5	Հանրապետության բոլոր գրադարանների համակարգչա-վորում՝ ինտերնետ կապի ապահովմամբ (շուրջ 100 հատ)	III 2011 – II 2012	ՀՀ մշակույթի նախարարություն	Գրադարանների գործառույթների համապատասխանեցում տեղեկատվական հասարակության պահանջներին
6	Հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում ժամանակակից էլեկտրոնային ուսուցման ծրագրերի ներդրում	III 2011 – II 2012	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	Եվրոպական չափանիշներին համապատասխանող ծրագրերի ներդրման ավարտ
7	ՔԿԱԳ արխիվի էլեկտրոնային իրագործման շարունակություն (վերջին 10	III 2011 – II 2012	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման	Էլեկտրոնային կառավարման վեբ ծառայությունների ապահովում

	տարիների համար)		նախարարություն	
8	e-gov մուտքի 400 կրպակների տեղակայում փոստերում, բանկերում, դպրոցներում և գրադարաններում	III – IV 2011	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	e-gov համակարգի մուտքի կետերի ապահովում: Մասնավոր հատվածը իր մոտ նման կրպակներ կներդնի հանրային-մասնավոր համագործակցության (PPP) սկզբունքով:

Կայացման փուլի միջոցառումներ
(III – IV 2012թ.)

№	Միջոցառում	Ժամկետ (եռամս.)	Պատասխանատու մարմին	Արդյունք
---	------------	--------------------	------------------------	----------

1	<p>e-gov.am-3 նախագծի իրագործում բոլոր պետական և տարածքային կառավարման մարմիններում: Ընդգրկվում են G2G (կառավարության տարբեր մարմինների միջև), G2B (կառավարության և մասնավոր ձեռնարկությունների միջև) և G2C (կառավարության և քաղաքացիների միջև) բոլոր առաջնահերթ վեբ ծառայությունները:</p>	III – IV 2012	<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p>	<p>Հիմնական վեբ ծառայությունները գործում են բոլոր պետական և տարածքային կառավարման մարմիններում, ներառյալ.</p> <ul style="list-style-type: none"> • ավտոմեքենայի գրանցում • Էլ. գյուղատնտեսություն • Էլ. արդարադատություն • Էլ. ընտրություններ • կենսաչափական տվյալներով նույնականացման քարտերի կիրառում տարբեր բնագավառներում • բոլոր պետական մարմինների ընդգրկում միասնական տրանզակցիաների հիման վրա կառուցված էլ. կառավարման համակարգում
2	<p>Գրադարանների թվայնացման գործընթացի (e-library) իրականացում հանրապետական և մարզային նշանակության օբյեկտների համար</p>	III – IV	ՀՀ մշակույթի նախարարություն	Թվայնացման գործընթացը իրագործված է հիմնական հայերեն գրականության համար
3	<p>ՔԿԱԳ էլ. արխիվի էլեկտրոնային իրագործման շարունակություն (30 տարվա համար)</p>	III – IV	<p>ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p>	Էլ. կառավարման գործառնությունների համար վեբ ծառայությունների ապահովում

4	ՀՀ էլ. կառավարման ցանցի միջազգային ինտեգրում	III – IV	<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> <p>ՀՀ տրանսպորտի ու կապի նախարարություն</p> <p>ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)</p>	ՀՀ կառավարության պորտալի միջոցով էլ. կառավարման ինտեգրում միջազգային կառույցների հետ՝ ըստ առանձին համաձայնագրերի
5	Էլ. կառավարման համակարգի մատչելիության 600 կրպակների տեղակայում փոստերում, բանկերում, դպրոցներում և գրադարաններում	III – IV	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2011 թ. սկսված գործընթացի ավարտ: Հանրային-մասնավոր հատվածների միջև համագործակցության սկզբունքով էլ. կառավարման մատչելիության լրացուցիչ կետեր հետագայում կտեղադրվեն ըստ անհրաժեշտության:

